ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԿ ՆԱԶԱՐՅԱՆ

2018 թ. «թավշյա հեղափոխությունը» զգալի փոփոխություններ մտցրեց հայաստանյան հասարակական-քաղաքական կյանքում: Իշխանության եկած ուժերը ստացան վստահության բարձր քվե, ինչը թույլ տվեց ներքին և արտաքին քաղաքականության մեջ նոր քայլեր ձեռնարկել: Տարածաշրջանային հակամարտություններում ևս այն իր ազդեցությունը թողեց: Հարևան Ադրբեջանը ստիպված էր հաշվի նստել իրավիճակի փոփոխության հետ:

Քանի որ Հայաստանի և Ադրբեջանի փոխհարաբերություններում կարևոր տեղ է զբաղեցնում տեղեկատվական հակամարտությունը, անհրաժեշտություն է առաջանում՝

✓ ներկայացնելու հեղափոխության ուղերձները և դրանց արձագանքը,

✓ ուսումնասիրելու հայ-ադրբեջանական տեղեկատվական հակամարտության դրսևորումները 2018 թ. ապրիլից մինչև 2020 թ. հունվար,

✓ մատնանշելու այն մարտահրավերները, որոնք ի հայտ են եկել հետհեղափոխական շրջանում:

Ուշադրություն ենք դարձրել միջազգային հայտնի կազմակերպությունների, կենտրոնների («Ֆրիդոմ հաուսը» (Freedom House)[1], «Լրագրողներ առանց սահմանների» (Reporters Without Borders)[2], Համաշխարհային բանկ (The World Bank)[3] և այլն) զեկույցներին, ինչպես նաև ուսումնասիրել ենք ադրբեջանական մի շարք կայքերի նյութեր[4]:

Ա. Հեղափոխության ուղերձները և հայ-ադրբեջանական տեղեկատվական հակամարտության ոլորտը

2018 թ. «թավշյա հեղափոխությունը» երևան բերեց հասարակական-քաղաքական կյանքի կարևոր ուղերձներ, որոնք դրսևորվեցին ներքին օրակարգում և արտաքին աշխարհի հետ փոխհարաբերություններում: Այն կարևոր ազդակ էր՝ ուղղված միջազգային հանրությանը՝ հայության իմիջը նորովի ներկայացնելու առումով: Իրադարձությունների ծավալումը փաստեց, որ հայ ժողովուրդը ընդունակ է անցն-

[1] Տե՛ս https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2019
[2] Տե՛ս https://rsf.org/en/ranking, 2019 world press freedom index
[3] Տե՛ս https://www.worldbank.org/en/country/armenia
[4] Տե՛ս Day.az, news.az, azernews.az և այլն:

ցում, սեփական ուժերով և առանց արտաքին միջամտության հեղափոխություն իրականացնել այն պայմաններում, երբ հակահայկական դիրքորոշում ունեցող երկու պետություններով է շրջապատված, աշխարհագրական անբարենպաստ դիրքում է գտնվում:

Միջազգային վարկանիշային կազմակերպությունների՝ Հայաստանի մասին զեկույցների տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ հետհեղափոխական շրջանում այն առաջընթաց է արձանագրել, իսկ ընդունված պատկերացումներն առ այն, թե հավանական է համարվում տնտեսության անկում, կամ երկիրը թևակոխում է անորոշությունների շրջան, Հայաստանի օրինակը փաստում է, որ հնարավոր է նաև հակառակը: Ըստ առկա տվյալների՝ բարձրացել է Հայաստանի սուվերեն վարկանիշը[5], առաջընթաց է գրանցվել տնտեսության զարգացման[6] և ժողովրդավարության ամրապնդման գործընթացում[7], մամուլի, համացանցի ազատության ոլորտում[8] և այլն:

2018 թ. իրադարձությունները դրական ազդեցություն թողեցին Հայաստանի միջազգային հեղինակության վրա: Այն անդրադարձավ նաև Ադրբեջանի հետ փոխհարաբերությունների վրա: Նախկինում կիրառվող տեղեկատվական հակամարտությունը որոշակի վերանայման ենթարկվեց: Հայկական միջավայրում արձանագրվեց տեղեկատվության մատուցման և հաղորդակցության ձևի որոշակի փոփոխություն: Հանրությանը հասանելի դարձան կառավարող շրջանակների ուղղակի մատուցվող տեղեկատվությունը, առանցքային իրադարձությունների մեկնաբանումը, ինչը կարճ ժամանակահատվածում խթանեց հանրության իրազեկվածության մակարդակը: Տեղեկատվական սպառնալիքների կանխարգելման տեսանկյունից ընդունված միջոց է հանրությանը օբյեկտիվ և բազմակողմանի տեղեկատվության անընդմեջ մատուցումը, որն ապահովում է հասարակության ստվար հատվածի «տեղեկատվական պահանջը», իսկ այս գործոնի բացակայությունը արտաքին և ներքին վտանգավոր հոսքերի ներթափանցման պարարտ հող կարող է լինել: Այս առումով Ադրբեջանի կողմից տեղեկատվական պատերազմ վարելու արդյունավետությունը նվազում է: Մասնավորապես, ինչպես նշում է ոլորտի մասնագետ Դ. Ջամալյանը, նախկինում պատերազմով սպառնալուն զուգահեռ Բաքուն պարբերաբար ապակայունացրել է իրադրությունը պետական սահմանին՝ մեզանում ձևավորելով «ամեն վայրկյան պատերազմի վերսկսման հավանականության» պատրանք, և ահա այդ հոգեբանական համապատկերում փորձում է մեզանում հասունացնել Արցախը հանձնելու գաղափարը,

---

[5] Տե՛ս https://www.moodys.com / (կիրառված՝ Moody's Upgrades Armenia's Ratings, 28.08.2019, https://www.azatutyun.am/a/30133803.html)

[6] Տե՛ս The World Bank, https://www.worldbank.org/en/country/armenia, 13.01.2020

[7] Տե՛ս, Countries in Spotlight, https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2019/democracy-in-retreat

[8] Տե՛ս նույն տեղը:

հրահրել այն թյուր, բայց վտանգավոր թեզի տարածումը, թե իբր Արցախը մեր երկրի կայուն զարգացման և խաղաղ հեռանկարի խոչընդոտ է[9]: Սակայն ներկայումս, երբ «նոր մեդիայի» հնարավորությունները կիրառելով՝ հայախոս լսարանի մի զգալի հատված տեղեկատվություն է ստանում իշխող շրջանակներից ուղղակիորեն, ինչպես նաև առկա է որոշակի վստահության մթնոլորտ այդ տեղեկատվության օբյեկտիվության նկատմամբ, նախկինում կիրառվող քարոզչության ադրբեջանական մեթոդները դառնում են անարդյունավետ:

Ադրբեջանի իշխանությունների համար ուրախալի չէր հեղափոխության փաստը, և դա ուներ պատճառներ: Նախ՝ Ադրբեջանում ժառանգաբար շարունակում է իշխել գործող վարչակարգը, որը փոփոխություններից իրեն ապահովագրելու խնդիր ունի հատկապես այն պարագայում, երբ երկրում օրեցօր ավելանում են սոցիալական խնդիրները, բազմամարդ են դառնում են բողոքի ակցիաները, սահմանափակվում են ազատությունները[10]: Հարավկովկասյան տարածաշրջանում Վրաստանը հեղափոխությունից հետո առաջընթաց գրանցեց երկրի տնտեսական զարգացման, կենսամակարդակի բարելավման ուղղությամբ: Տնտեսության զարգացման դինամիկան խոստումնալից է նաև Հայաստանի համար: Իսկ Ադրբեջանի իշխանությունների համար սա մտավախության տեղիք է տալիս այն առումով, որ հայաստանյան զարգացումները կարող են ազդել հասարակական կարծիքի վրա, վարակիչ լինել քաղաքացիական հասարակության համար, ընդօրինակելի լինել դժգոհ զանգվածների շրջանում: Այս համատեքստում հատկանշական է, թե ինչպես է Ադրբեջանի նախագահը մեկնաբանում տարածաշրջանում հեղափոխությունների հարցը: 2019 թ. Բաքվի համալսարանում նախագահ Ի. Ալիևի հայտնի ելույթում[11] տեսանելի են ադրբեջանական մտավախությունները: Ենթադրելով, որ դեռևս 2005 թ. Վրաստանից, Ուկրաինայից, Ղրղզստանից հետո հեղափոխություն պետք է լիներ Ադրբեջանում, նա նշում է. «Մենք կանգնեցրինք այդ ժանտախտը, այդ չարիքը: Այժմ ողջ աշխարհը տեսնում է, որ հեղափոխությունները դժբախտություն են բերել այդ երկրներին, նրանք դեմ առ դեմ են մնացել իրենց խնդիրների հետ, անկարգությունները չեն դադարում այդտեղ»[12]: Այս ելույթից ակնհայտ է դառնում, որ Ի. Ալիևը ան-

---

[9] Տե՛ս **Դ. Ջամալյան**, Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական նկարագիրը, Եր., 2015, էջ 49:

[10] «Freedomhouse-ի» 2019 թ. զեկույցի համաձայն՝ Ադրբեջանը ոչ ազատ երկրների, իսկ Հայաստանը, Վրաստանը կիսաազատ երկրների ցանկում են, ընդ որում՝ Հայաստանը առանձնացված է հսկայական բարեփոխումներ կատարած երկրների կազմում (տե՛ս Democracy in Retreat, Freedom in the World 2019, https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2019/democracy-in-retreat):

[11] Տե՛ս "Azerbaijan is a traditional country, will not integrate into europe", www.jamnews.net/azerbaijan-is-a-traditional-country-will-not-integrate-into-europe-president-aliyev/, November 27, 2019

[12] Տե՛ս "Azerbaijan is a traditional country, will not integrate into Europe – President Aliyev",

հանգստացած է, թե հեղափոխական ալիքը կարող է հասնել Բաքվի մատույցներ, և իր ուղերձով փորձում է նսեմացնել տարածաշրջանի փոփոխությունները և ձեռքբերումները:

ՀՀ դիրքերի ամրապնդումը և վարկանիշի բարձրացումը իրենց ուրույն ազդեցությունը թողեցին բանակցային գործընթացի և դրա շուրջ առկա տեղեկատվական գործընթացների վրա: Այդուհետ Ադրբեջանը գործ ուներ երկրի ներսում վստահության քվե ստացած և իր շահերը հետապնդող, արտաքին աշխարհում ավելի ընկալելի ՀՀ նոր իշխանությունների հետ: Կարող ենք առանձնացնել հետհեղափոխական շրջանի Հայաստանի դիրքորոշման նոր դրսևորումները, ինչպես նաև Ադրբեջանի համապատասխան արձագանքը.

- Արցախի վերամիավորման խնդիրը սկսեց քննության առարկա դառնալ: Սա «Հայաստան է և վերջ» ուղերձով Ստեփանակերտում բարձրաձայնվեց Հայաստանի և Արցախի միավորման խնդրի կարևորությունը: Տեղեկատվական հարթակում Բաքվի իշխանությունների համար սա լուրջ մարտահրավեր է, քանի որ տարիներ շարունակ ներքին և արտաքին լսարանին մատուցել է այլ մոտեցումներ: Մասնավորապես, Բաքուն ջանքեր է գործադրում հայկական միջավայրում հասունացնելու հակամարտությունը միակողմանի զիջումներով կարգավորելու դիրքորոշումը[13], միջազգային լսարանում՝ Արցախի՝ իրավասուբյեկտություն ձեռք բերելը բացառելը, «Ադրբեջանի տարածքային ամբողջականության» սեփական պատկերացումները լեգիտիմացնելը[14], իսկ վերամիավորված Հայաստանի ուղերձը խարխլում է երկար տարիներ շրջանառված ադրբեջանական այս թեզերը:
- ՀՀ կառավարությունը առաջ քաշեց Արցախը որպես բանակցող կողմ վերականգնելու պահանջը, ինչը պաշտոնական Բաքվի քարոզչության համար անընդունելի է: Այս ամենին ավելացավ ՌԴ արտգործնախարարի հայտարարությունն առ այն, որ առանց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համաձայնության որևէ պայմանավորվածություն անհնար է ձևակերպել[15]: Փաստենք, որ հայկական կողմի պահանջը իրատեսական է՝ անկախ Ադրբեջանի ընդդիմացումից:
- Հայաստանի նոր իշխանությունը կարևորեց Ադրբեջանի իշխանությունների հետ անմիջական շփումը: Ղեկավարների միջև ստեղծվեց ուղիղ կապ: 2019 թ. նոյեմբերին եղան հայ և ադրբեջանցի լրագրողների փոխադարձ այցեր: Նման բան տեղի չէր ունեցել 2001 թ. ի վեր: Այս հանդիպումները հնարավորություն էին կողմերի համար հասկանալու միմյանց, առերեսվելու տիրող մթնոլորտին, ապահովելու տար-

https://jam-news.net/azerbaijan-is-a-traditional-country-will-not-integrate-into-europe-president-aliyev/, November 27, 2019

[13] Տե՛ս **Դ. Ջամալյան**, նշվ. աշխ., էջ 48:

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 49:

[15] **Ս. Լավրով,** Առանց ԼՂ ժողովրդի որևէ համաձայնություն ձևակերպելն անհնար է, https://www.youtube.com/watch?v=x2O3zS109_M

բական շփում, որը նրանց միջև ծագած խնդիրները ինքնուրույն լուծելու միջոց է: Միաժամանակ այն կարող է կանխարգելել երրորդ կողմի «տեղեկատվական աղմուկը»:

• Հայաստանի կառավարությունը բարձրաձայնեց, որ Արցախի հիմնահարցի շուրջ ցանկացած լուծում պետք է ընդունելի լինի Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի ժողովուրդների համար: Սա խնդրի կարգավորմանն ընդառաջ այնպիսի քայլ էր, որ ենթադրում էր համանման հայտարարություն ադրբեջանական կողմից, սակայն դա տեղի չունեցավ և հավանաբար չի էլ լինի: Փաստորեն, սրանով հայկական կողմը ի լուր աշխարհի ընդգծում է կառուցողաբար բանակցելու պատրաստակամությունը և ի ցույց է դնում հակառակորդի ետքայլը նման մոտեցումից: Տեղեկատվական հակամարտության տեսանկյունից կարող ենք փաստել, որ Ադրբեջանը չի կարողանում համարժեքորեն արձագանքել հայկական կողմի ուղերձներին:

• Հայաստանն անցնում է հարձակողական ռազմավարության: Ինչպես նշել է պաշտպանության նախարարը, հայկական զինված ուժերը չեն պատրաստվում մշտապես մնալ պաշտպանվողի դիրքերում: Մարտական ավիացիայի ոլորտում կործանիչների ձեռքբերումը, անօդաչու թռչող սարքերի և նորագույն տեխնոլոգիաների ներդրումը ռազմաարդյունաբերության մեջ նշվածի կարևոր ցուցիչ են և կոտրում են ադրբեջանական մամուլում անդադար շրջանառվող պնդումները, թե հայերն անպատրաստ են պատերազմի, իսկ իրենք ժամանակակից սպառազինություններով գերակա դիրք ունեն, միաժամանակ հասարակական կարծիքում կարծրանում է արագ հաղթանակի հասնելու անհնարինության գաղափարը:

Եվ այսպես, հայկական կողմի ուղերձները չէին կարող անարձագանք մնալ Ադրբեջանում հատկապես այն պայմաններում, երբ ուշիուշով հետևում են հայաստանյան անցուդարձերին: Այս ամենի արդյունքում ձևավորվում է որոշակի հասարակական կարծիք և ստիպում Բաքվի իշխանություններին ձեռնարկելու համապատասխան քայլեր.

• «Թավշյա հեղափոխությունից» հետո Բաքվի իշխանությունները սկսեցին ավելի շատ ուշադրություն դարձնել սեփական երկրի իմիջին: Այս պարագայում անհրաժեշտ էր ձերբազատվել որոշ հին մոտեցումներից և կերտել «նոր» Ադրբեջանի կերպար, որտեղ իբր «ակտիվ» փոփոխություններ են տեղի ունենում: Երկրի կառավարման առանցքային նշանակության հին կադրերը փոխարինվեցին փոխնախագահ Մեհրիբան Ալիևայի մարդկանցով: Խորհրդարանը ցրելը ևս միտված էր այն նոր կադրերով համալրելու և նորովի ներկայանանալու ներքին և արտաքին լսարանի առջև: Հատկանշական է, որ վերջին տասնամյակներում առաջին անգամ է խորհրդարանը փոխվում, և պատահական չէ, որ այն տեղի է ունենում հենց այս ժամանակահատվածում: Նման քայլի համար որպես պատճառաբանություն է բերվում, թե նոր

կաղրերը պետք է կարողանան համարժեք ներկայացնել իշխող ուժի տեսակետները արտաքին և ներքին լսարանում:

- Ուշագրավ է նախագահ Իլհամ Ալիևի՝ Ադրբեջանի իմիջը նորովի ներկայացնելու փորձերից մեկը: Իր ղեկավարության տարիներին նա երբեք դուրս չէր եկել մարդկանց մեջ զբոսնելու, քաղաքացիների հետ լուսանկարվելու, սակայն դա արեց՝ ցույց տալու, թե ինքը ևս առանց որևէ խնդրի կարող է ազատ շրջել Բաքվի փողոցներում և շփվել մարդկանց հետ: Կարծում ենք, որ այս պարագայում նախագահը հաշվի է առել Հայաստանի օրինակը:
- 2018-2019 թթ. Ադրբեջանում բողոքի ցույցերն ավելի մարդաշատ էին, սակայն իշխանությունները ցուցարարների նկատմամբ նախկինի պես կոշտ միջոցներ չկիրառեցին, ինչպես նաև միջազգային ճնշման ներքո ազատ արձակվեցին քաղբանտարկյալներ[16]:
- Կարևորագույն փաստ է հետհեղափոխական շրջանում սահմանային լարվածության թուլացումը: Սա վկայությունն է այն բանի, որ Բաքվի իշխանությունները ապակայունացնող միջադեպերի հրահրմամբ Հայաստանի ներսում լարվածություն առաջացնելու հին մոտեցումից խուսափում են:

Այսպիսով, հայաստանյան զարգացումները արժեքավոր գործոն դարձան տարածաշրջանային անցուդարձերը նորովի գնահատելու, մասնավորապես հայ-ադրբեջանական տեղեկատվական հակամարտության դաշտում սեփական խաղի կանոնները թելադրելու համար: Արցախյան հիմնահարցի վերաբերյալ բարձրաձայնված ուղերձները և խնդրի շուրջ ծավալվող գործընթացները Ադրբեջանին հարկադրեցին վերանայել «ագրեսիվ» մոտեցումները, հայկական միջավայրում տեղեկատվության մատուցման նոր ձևերը նվազեցրին ադրբեջանական քարոզչության ազդեցության արդյունավետությունը, հարձակողական ռազմավարության ուղղությամբ գործադրված ջանքերը ստվերեցին արագ հաղթական պատերազմ մղելու՝ ադրբեջանական հասարակությանը մատուցված նկրտումները և այլն:

Բ. Հետհեղափոխական շրջանի մարտահրավերները

«Թավշյա հեղափոխությունից» հետո տեղեկատվական հակամարտության ոլորտում Ադրբեջանի մոտեցումները նույնպես վերանայվեցին: Պատճառներից մեկն էլ այն էր, որ տասնամյակներով շահարկվող «թշնամի հայի» կերպարը, որն էական նշանակություն է ունեցել և ունի այս բազմաէթնիկ երկրի ներքաղաքական կյանքում, կորցրեց նախկին ազդեցությունը: «Թշնամու կերպարի» ստեղծումը տեղեկատվական հակամարտության կարևոր տարրերից է, և, ինչպես ոլորտի մասնագետն է նշում, մարդկանց համախմբելու համար թշնամի է անհրաժեշտ, իսկ եթե այն բացակայում է, ապա թշնամուն ստեղծում են և շա-

[16] Տե՛ս «Բաքուն Ղարաբաղյան կարգավորման նոր ռազմավարություն է փորձարկում», 10 դեկտեմբեր, 2019, https://www.civilnet.am/news/2019/12/10/

հարկում[17]: Սակայն իրավիճակի փոփոխությունը բարդացնում է հակահայկական տրամադրությունների հետագա շահարկումը, քանի որ ադրբեջանական հասարակության մի հատված ուշադիր հետևում է հայաստանյան լրահոսին և ծանոթ է տիրող իրավիճակին: Նման պայմաններում նախկին պարզունակ-ագրեսիվ քարոզչությունը կարող է փոխարինվել բազմաքայլ տեղեկատվական գրոհներով և ավելի խորքային քարոզչական թեզերով: Ադրբեջանական լրահոսում (day.az, news.az և այլն) տեսանելի են, որ ուշադրություն է դարձվում երկրի իմիջի փոփոխմանը, միջազգային վարկանիշային կազմակերպությունների գնահատականների աճին, ինչպես նաև օտարազգի ներկայացուցիչների միջոցով հակահայկական քարոզչություն իրականացնելուն[18]: Հայտնի է, որ արդեն իսկ ստեղծվել է ռազմավարական հետազոտությունների նոր կենտրոն, որը պետք է համակարգի տեղեկատվական ոլորտը և արցախյան հարցի վերաբերյալ ադրբեջանական տեսակետները «համոզիչ» ներկայացնի:

Սաստկացող դժգոհությունների և ներքին անկայունության սրման պայմաններում Ադրբեջանի ղեկավարությունը հնարավոր է՝ վերադառնա հին մեթոդներին և մեծացնի լարվածությունը շփման գծում՝ ուշադրությունը դեպի սահմանային խնդիրները շեղելու նպատակով: Ինչպես հայտնի է, «շեղման ռազմավարությունը»[19], որը հասարակական վերահսկողության հասնելու հիմնական տարրերից է, մեծ դեր ունի Ադրբեջանի ներքաղաքական խնդիրների կարգավորման գործում: Նման պայմաններում կարող է անկանխատեսելիորեն փոփոխվել սահմանում առկա դրությունը:

Հայտնի է, որ 2020 թ. Ադրբեջանը մեծացնում է պաշտպանական բյուջեն՝ նոր խմբաքանակով սպառազինություն ձեռք բերելով: Սա կարող է որոշակի ազդեցություն թողնել մարտական ոգին բարձրացնելու, հասարակության ուշադրությունը արցախյան խնդրի շուրջ համախմբելու վրա: Միաժամանակ այն կարող է որոշակի հենք ստեղծել՝ շրջանառության մեջ դնելու այն թեզը, թե մենք զիջում ենք սպառազինությունների մրցավազքում:

Պետք է արձանագրել, որ Արցախյան հիմնախնդրի շուրջ տեղեկատվական միջավայրը շատ զգայուն է հայաստանյան հասարակական-քաղաքական օրակարգում. ներհայաստանյան թեժ քննարկումները երբեմն վտանգավոր զարգացումներ կարող են ունենալ: Մասնավորապես, 2019 թ. դեկտեմբերին Բրատիսլավայի հանդիպումը հայկա-

---

[17] Տե՛ս **Гудков Л.**, ред. Конрадова Н., Образ врага, (Нация и культура: Новые исследования: Россия) М.: ОГИ, О-23 2005, էջ 35-41:

[18] Տե՛ս "German magazine publishes article on Armenia-Azerbaijan Nagorno-Karabakh conflict", https://news.az/articles/karabakh/144201, 14.12.2019

[19] Տե՛ս **Chomsky N.**, The International Coalition, Top 10 Media Manipulation Strategies, http://theinternationalcoalition.blogspot.am/2011/07/noam-chomsky-top-10-media-manipulation_08.html.

կան լսարանին ներկայացվեց հիմնականում բացասական հենքով, և տեղի ունեցած բանակցությունները վերածվեցին տեղեկատվական արշավի՝ քննարկման առարկա դարձնելով «հողեր հանձնելու» բազմաչարչար թեզը: Այս տեղեկատվական արշավը հոգեբանական դաշտում բացասական ազդեցություն ունի, որը հասարակության մեջ ի ցույց է դնում արթուն վախերը և նսեմացնում հաղթանակի ձգտող հասարակության տեսլականը, իսկ նման «լուսանցքները» կարող են զենք դառնալ տարբեր երկրների ձեռքին սեփական շահերը մեր երկրում առաջ տանելու առումով:

Բանալի բառեր – *Հայաստան, Արցախ, «թավշյա հեղափոխություն», ուղերձներ, պետության իմիջ, մարտահրավեր, տեղեկատվական հակամարտություն, տեղեկատվական միջավայր, քարոզչություն, Ադրբեջան*

АЙК НАЗАРЯН – *Информационные процессы в постреволюционной Армении и азербайджанская пропаганда.* – Изменения, произошедшие в Армении после народной революции 2018 года, стали важным фактором переоценки событий в регионе, в частности, правил игры в сфере армяно-азербайджанского информационного противостояния. Это противостояние вступило в новый этап: процессы вокруг урегулирования Арцахского конфликта вынудили Баку пересмотреть собственные подходы, вытеснили идею скоротечной победоносной войны, которая преподносилась азербайджанскому обществу. Новые формы информирования, освоенные армянскской стороной, снизили эффективность влияния азербайджанской пропаганды. За последний период появились новые вызовы: власти Баку предпринимают меры по реализации глубинных и многоплановых информационных атак. Для нейтрализации этих угроз необходима устойчивая информационная среда на основе национальных интересов и ценностей.

Ключевые слова: *Армения, Арцах, «бархатная революция», послание, имидж государства, вызов, информационная война, информационная сфера, пропаганда, Азербайджан*

HAYK NAZARYAN – ***Information Processes in Post-Revolution Armenia and Azerbaijan Propaganda.*** – The 2018 Armenian Revolution brought significant changes to the regional policy, allowing to newly evaluate regional political processes. Specifically, these transformations affected the ability of Armenia to set our own rules in Armenian-Azerbaijani information warfare. Armenian-Azerbaijani information warfare entered a new phase: new processes and issues of the Artsakh conflict brought up by Armenian side made Azerbaijan review their attitude toward the conflict: offensive strategy adopted by the new Armenian government shadowed the idea of swift victory served to Azerbaijani society for many years, new approaches of the Armenian side towards the information delivery reduced the efficiency of Azerbaijani propaganda, etc. At the same time, we are facing new challenges: Baku is taking serious steps towards creating a more comprehensive and diverse information policy. To meet these new challenges, and keep a high-resistant information environment, we need to create an information policy based on national interests and the national value system.

Key words: *Armenia, Artsakh, "Velvet Revolution", message, state image, challenge, information warfare, information sphere, propaganda, Azerbaijan*

Ներկայացվել է՝ 13.02.2020, Գրախոսվել է՝ 11.03.2020, Ընդունվել է տպագրության՝ 24.07.2020